

տանեկիկ վազէր» տողը պարզապէս կարդալ «եւ պատանեկիկ վազէր», յապաւելով «ի բոցոյն» բառը:

Հին երգն ասում է .
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր ,
Ընդ եղեգան փող բոց ելանէր
Եւ ի բոցոյն պատանեկիկ վազէր .

Այստեղ յղացման եւ յօրինուածքի մի որոշ կարգ կայ եւ պատկերների մի շարք: Հեթանոս երգիչն այստեղ տեսնուող է բառի բուն իմաստով: Մտքի աչքով նա տեսնում է, որ եղէգի փողից ծուխ է դուրս գալիս, յետոյ նոյն փողից բոց է դուրս գալիս, յետոյ այդ բոցի միջից վազում է մի պատանի. ուրեմն նախ ծուխն է տեսնում, յետոյ բոցը, յետոյ վազող պատանին: Այս երեք տողով նկարուած է մի ամբողջ տեսարան, որի յօրինող տարբերը, իբր անջատ տեսարաններ, յաջորդում են իրար եւ կապուած են իրար հետ:

Բայց հիմա կարդանք ուղղումը .
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր
Ընդ եղեգան փող բոց ելանէր
Եւ պատանեկիկ վազէր .

Այստեղ պատկերի միութիւնը խախտուած է. պատանին այլեւս կապ չունի ծուխ ու բոցի հետ: Նա վազում է ինքն իր համար, իսկ ծուխն ու բոցը դուրս են գալիս իրանք իրանց համար: Միեւնոյն է թէ դաշտի մի կողմը կրակ անէին եւ ծուխ ու բոց բարձրանար, իսկ դաշտի մի ուրիշ կողմով ինչ որ պատանի վազէր:

Բայց կարելի է մտածել, որ «ընդ եղեգան փող» խնդիրը վերաբերում է նաեւ «վազէր» բային եւ ուրեմն ենթադրել, թէ երգիչն ուզում է ասել՝

Ընդ եղեգան փող բոց ելանէր
Եւ (ընդ եղեգան փող) պատանեկիկ վազէր .

Այս ձևով աւելի անհեթեթ բան դուրս կը գայ: Եթէ «ընդ եղեգան փող» ասածը հասկանանք այնպէս, ինչպէս հասկանում ենք «ընդ հուր եւ ընդ ջուր» բառերը «անցաք մեք ընդ հուր եւ ընդ ջուր» խօսքի մէջ. այսինքն՝ «անցանք մենք ջուր ու կրակի միջով կամ միջից՝ — այն ժամանակ մենք կը ստանանք մի անիմաստ խօսք:

Այս հաշուով երգչի ասածը պիտի հասկա-

նանք այն մտքով, թէ «եղէգի փողի միջից կամ միջով պատանի էր վազում, մի բան, որ երգիչը տեսնել էր կարող: Ոչ միայն նա, այլ եւ ոչ ոք կարող էր ասել թէ եղէգի միջից կամ միջով պատանին վազո՞ւմ էր թէ ոչ: Մինչդեռ հեթանոս երգիչը, որ գտարիւն բանաստեղծ է, շատ լաւ տեսնում է իր ասածը: Պատանին եղէգի միջից դուրս է գալիս բոցի հետ եւ ապա վազում է բոցի մէջն ու միջից: Ուստի երգիչն ասում է. «Բոց ելանէր եւ ի բոցոյն պատանեկիկ վազէր»: «Ի բոցոյն» թէեւ բացառական ձևւ ունի, բայց իմաստը ներգոյական է: Վահագն ոչ թէ բոցից է վազում, այլ բոցի մէջն ու միջից. եւ այս կրկնակ իմաստն է, որ արտայայտուած է մի տեսակ ներգոյական բացառականով: Նա որ եղէգնաձիւն էր եւ հրաձիւն, որի հերը հուր էր եւ մօրուսը՝ բոց — կարիք չունէր բոցից վազելու. հուրն իր տարերքն էր. նա հուրի մէջ էր վազում:

Եւ ի՞նչ կարիք կար յապաւելու այսքան կարեւոր մի բառ եւ հասնելու այսքան անհեթեթ հետեւանքների: Կարիքն այն է, որ Լ. Գրէյ կարծում է, թէ այդ տողը պէտք է եօթ վանկ ունենայ եւ ոչ թէ իննը կամ տասը...

Նկատենք նաեւ, որ «ի բոցոյն» բառը չի կարող համարուել լուսանցքի բացատրութիւն, քանի որ «պատանեկիկ վազէր» տողի մէջ Հկայ մի բան, որ հին ընթերցողը «ի բոցոյն» բառով մեկնել կարենար: Դիտել պէտք է նաեւ, որ «ի բոցոյն» բառի վերաբերմամբ Խորենացու բոլոր ձեռագիրները համաձայն են, որ նշանակում է թէ այդ բառը նոյն այդ տողի մէջ է եղած եւ ա՛յն հին ձեռագիրներում, որոնցից արտագրուած են մեր ձեռքն եղածները: (Տե՛ս Խորենացի, 1913, էջ 86, ծանօթ.):

Հետեւեալ յապաւելում վերաբերում է «արքայն» բառին, որ հանդիպում է մեր վիպասանքի այս տողում .

Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ .

Լ. Գրէյ առաջարկում է կարդալ .

Հեծաւ արի Արտաշէս ի սեաւն գեղեցիկ .

Սրանով նա ստանում է ենթադրած չափը 7+6 = 13 վանկով. բայց այդ ենթադրութիւնը կարո՞ղ է բաւարար հիմք համարուել իրական մի բառ յապաւելու համար: Այդ բառը ձեռա-